ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/190

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Ասմիդա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/20» ծածկագրով բաց մրցույթ, էներգախնայող լուսատուների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17845-2019 գրությամբ «Ասմիդա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 25.10.2019թ.-ի թիվ 01/61-22486 գրության հիման վրա, 30.10.2019թ.-ին «Ասմիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 30.10.2019թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2019թ.-ի թիվ 580-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 01.11.2019թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

04.11.2019թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2019/190 համարի ծածկագիրը և 07.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 07.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.11.2019թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 25.10.2019թ. թիվ 01/61-22486 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Ասմիդա ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցը 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ ծանուցվել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը: Մասնակցի կողմից փաստաթղթերի

գնահատման արդյունքում 9-րդ չափաբաժնի մասով հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություն:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը /ապրանքների տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին/:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգ 48-րդ կետի 2-րդ մասի դրույթով՝ որոշեց 9-րդ չափաբաժնի մասով մերժել Մասնակցի կողմից ներկայացրած հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ասմիդա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ասմիդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.11.2019թ.-ին գրությամբ դիմել է Մասնակցին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ. թիվ 26/26-1/17845-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2019/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էներգախնայող լուսատուների ձեռքբերման նպատակով 13.08.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Ասմիդա» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/20» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով սույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ասմիդա» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 30.90.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որակավորման պահանջների գնահատման արդյունքում Կարգի 46-րդ կետի (ապրանքների գնման դեպքում տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին) և կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում «Ասմիդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 08.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ասմիդա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում 9-րդ չափաբաժնի մասով չի շտկել անհամապատասխանությունը /ապրանքների տեխնիկական բնութագիրը չի

համապատասխանում հրավերի պահանջներին/: Մասնավորապես առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ուսումնասիրելիս պարզվել է, որ առաջարկվում է LED լուսարձակ (LED прожектор) LED լուսատուի (LED лампа) փոխարեն, երաշիքային ժամկետը՝ 5 տարվա փոխարեն նշվել է 3 տարի, իսկ հզորության շեղումը ± 5% փոխարեն կազմում է 10 %:

Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասով, որոշել է 9-րդ չափաբաժնի մասով մերժել «Ասմիդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի 9-րդ չափաբաժնի համար պահանջվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժին 9

Տեսակը	LED լուսատուներ
Օգտագործման նպատակը	Արտաքին լուսավորություն
Հզորությունը, Վտ	45 վտ, կամ համարժեք հզորության նվազագույն լուսային հոսքով՝4500 լմ
Լույսի բաշխման կորը	Կիսաձավալային 140 °
Լարման տիրույթը	180 - 250 Վ
Հաճախականությունը	50 Հg
Լուսատվության արդյունավետությունը	≥100 լմ/Վտ
Գունափոխանցման ինդեքսը	Ra≥ 75
Ջերմաստիճանային տիրույթը	-30 ^{0}C –ից մինչև +40 ^{0}C
Շահագործման ժամկետը	≥30,000 ժամ
Գունային ջերմաստիճանը	4000 K
Ֆլիկերի թույլատրելի աստիճանը	≤ 5%
Հզորության գործակից(cosφ)	≥ 0.9
Ներթափանցման պաշտպանությունը դասը (IP) բոլոր լուսատուների համար	IP65 – ից ոչ ցածր
Մեխանիկական պաշտպանությունը դասը (IK)	IK07 –ից ոչ ցածր
Իրանի նյութը	Ալյումինի ձուլվածք
Լուսատուների ուղղահայաց կարգավորում	Կարգավորվող
Լուսատուների մոնտաժման պոչամասի տրամագիծը (մմ)	≤ 50,
Լուսահոսքի կորուստը	Ոչ ավել 20 % 50000 ժամից հետո
Երաշխիքային ժամկետ	Նվազագույնը 5 տարի
Հզորության թույլատրելի շեղումը	± 5%

Մասնակիցը թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող 9-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրով

նշել է՝ LED լուսատու LPR-50W-4000K-M SMD Slim, հզորությունը 50 վտ, երախխիքային ժամկետը 3 տարի…:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության 30.10.2019թ. թիվ 26/26-1/17845-2019 գրությամբ «Ասմիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է … ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապա-տասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկա¬կան բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից…,

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից էներգախնայող լուսատուների ձեռքբերման նպատակով 13.08.2019թ.-ին հայտարարվեած «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Ասմիդա» ՍՊԸ-ն և Հանձնաժողովի 23.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, ինչով պայմանավորված վերջինս ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 30.90.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որակավորման պահանջների գնահատման արդյունքում Կարգի 46-րդ կետի (ապրանքների գնման դեպքում տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին) և կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում «Ասմիդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ:

Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 08.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ասմիդա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում 9-րդ չափաբաժնի մասով չի շտկել անհամապատասխանությունը /ապրանքների տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին/: Մասնավորապես առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ուսումնասիրելիս պարզվել է, որ առաջարկվում է LED լուսարձակ (LED прожектор) LED լուսատուի (LED лампа) փոխարեն, երաշիքային ժամկետը՝ 5 տարվա փոխարեն նշվել է 3 տարի, իսկ հզորության շեղումը ± 5% փոխարեն կազմում է 10 %, ինչով պայմանավորած Հանձնաժողովը որոշել է 9-րդ չափաբաժնի մասով մերժել «Ասմիդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը:

Մասնակիցը թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող 9-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է՝ LED լուսատու LPR-50W-4000K-M SMD Slim, հզորությունը 50 վտ, երախխիքային ժամկետը 3 տարի…: Իսկ Ընթացակարգի հրավերի 9-րդ չափաբաժնի համար պահանջվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժին 9

Տեսակը	LED լուսատուներ
Օգտագործման նպատակը	Արտաքին լուսավորություն
Հզորությունը, Վտ	45 վտ, կամ համարժեք հզորության նվազագույն լուսային հոսքով՝4500 լմ
Երաշխիքային ժամկետ	Նվազագույնը 5 տարի
Հզորության թույլատրելի շեղումը	± 5%

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցն պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Ասմիդա» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ. թիվ 26/26-1/17845-2019 գրությամբ «Ասմիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/190 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ասմիդա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**